



ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակ

Պրոֆեսոր Քետրին Նայման-Մետկալֆ
ԵԱՀԿ-ի անկախ փորձագետ
Սեպտեմբեր, 2008

Նկատառումներ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ լիցենզավորման մորատորիումի մասով

Սույն զեկույցը վերաբերում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում հետևյալ հոդվածներն ավելացնելու առաջարկությանը.

Հոդված 1. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի (9 հոկտեմբերի 2000 թվականի ՀՕ-97, այսուհետ՝ Օրենք) 59-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«Մինչև 2010 թվականի հունիսի 20-ը հեռուստառադիոհեռարձակման լիցենզավորման մրցույթներ չեն հայտարարվում: Այն հեռուստաընկերությունները, որոնց լիցենզիայի գործողության ժամկետը լրանում է մինչև 2011 թվականի հունվարի 21, կարող են լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտ ներկայացնեն Ազգային Հանձնաժողով: Լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվում է հայցվող ժամկետով, բայց ոչ ավելի, քան մինչև 2011 թվականի հունվարի 21-ը.»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախապատմություն

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը, որը մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից, ընդունվել է առաջին, երկրորդ և երրորդ ընթերցմամբ ՀՀ Ազգային ժողովի սեպտեմբերի սկզբին տեղի ունենած արտակարգ նիստում՝ առանց հանրային քննարկումների և խորհրդակցությունների: Դա արժանացել է տեղական ԶԼՄ-ների և ՀԿ-ների խիստ քննադատությանը: Նրանք կարծում են, որ նոր լիցենզիաներ տրամադրելու մորատորիումը հատկապես նպաստակ ունի կանխելու նոր անկախ հեռարձակողների լիցենզավորումը: Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2008 թ.-ի հունիսի 1620 (2008) բանաձևը Հայաստանին կոչ է անում ապահովել «լիցենզավորման հրապարակային, արդար և թափանցիկ ընթացակարգ», հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման ֆոնի վրա, որով վերջինս պաշտպանել է տեղական անկախ

հեռուստաընկերության դիմումը, որը 2002 թ.-ին հակասական հանգամանքներում գրկվել էր հեռարձակման լիցենզիայից: Անկախ լրատվամիջոցների և ՀԿ-ների կարծիքով, մորատորիումը լիցենզավորման հրապարակային և արդար ընթացակարգը ադալադելու ևս մի եղանակ է, իսկ թվայնացման գործընթացն օգտագործվում է որպես արդարացում:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքը թվայնացման մասին դրույթներ չի պարունակում: Լրացումները մանրամասն կանոններ չեն պարունակում, բայց հանդիսանում են առաջին քայլ թվայնացման գործընթացում: Սակայն, կա վտանգ, որ Հայաստանի հեռարձակման դաշտը դեռ պատրաստ չէ այդպիսի քայլի, քանի որ կա ԶԼՄ-ների բազմակարծության և բազմազանության պակաս:

Թվայնացում

Ըստ էության, յուրաքանչյուր երկիր ինքն է որոշում թվայնացումն սկսելու ժամկետները՝ հաճախականությունների սպեկտրին վերաբերող կանոնների շրջանակներում, որոնք սահմանվում են Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից: Ըստ այդ կանոնների, յուրաքանչյուր երկիր ինքն է որոշում՝ անցնելու է թվային համակարգի, թե ոչ, և երբ է կատարվելու այդ անցումը, սակայն գործնականում այդ անցումն անխուսափելի է: Եվրամիությունում թվային համակարգին անցնելու ընդհանուր ժամկետ սահմանված չէ, սակայն նպատակ կա այդ անցումը կատարել գոնե 2012 թ.-ին: Հայաստանում անցման ժամկետների վերաբերյալ քաղաքացիական հասարակության և իշխանությունների տեսակետները հակասում են միմյանց, և առանց Հայաստանի կոնկրետ պայմանների մանրակրկիտ ուսումնասիրության հնարավոր չէ որոշել, թե ամենալավ տարբերակը որն է:

Ցանկացած դեպքում, նախապատրաստական աշխատանքները պետք է կատարվեն հնարավորինս շուտ՝ խորհրդակցելով բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ հեռարձակման ոլորտի ներկայացուցիչների և քաղաքացիական հասարակության հետ: Մորատորիումը միգուցե լավագույն առաջին քայլը չէ: Չի կարելի թույլ տալ, որ թվայնացումը նվազեցնի բազմազանության և բազմակարծության աստիճանը, և այն չպետք է օգտագործվի որպես ազատ և անկախ հեռարձակումը սահմանափակելու արդարացում: Եթե երկրում հեռարձակման դաշտը բազմակարծիք և բազմազան չէ, ապա լավ կլինի հետաձգել թվայնացումը և նախ այլ բարեփոխումներ իրականացնել:

Մորատորիումի պատճառները

Օրենքում կատարված լրացումները հիմնավորվում են նրանով, որ Հայաստանի Հանրապետությունը պատրաստվում է թվային ռադիոհեռուստահեռարձակման համակարգ ներդնել Հայաստանի տարածքում: Անալոգային լիցենզիաների տրամադրման մորատորիումի շրջան ունենալը համապատասխանում է միջազգային պրակտիկային: Մորատորիումի տեսքը, ինչպես և թվայնացման եղանակը և ժամանակացույցը, տարբեր են տարբեր երկրներում:

Մորատորիումը օգտակար է, որովհետև զուգահեռաբար անալոգային և թվային հեռարձակում ունենալը շատ թանկ է: Ուժի մեջ գտնվող լիցենզիաների գործողության ժամկետի վաղաժամ դադարեցումը (անալոգային հեռարձակումն անջատելու պատճառով) կարող է բազմաթիվ իրավական խնդիրներ առաջացնել, օրինակ՝ օրինական ակնկալիքների խնդիրը: Լիցենզիաների գործողության ժամկետը չի կարելի վաղաժամ դադարեցնել՝ առանց հաշվի առնելու հեռարձակողների շահերը, ովքեր ներդրումներ են կատարել և ակնկալել են գործունեություն ծավալել որոշակի ժամկետի ընթացքում: Հետևաբար, ավելի լավ է անել այնպես, որ անցումը կատարվի աստիճանաբար, և գալիս է մի պահ, երբ մորատորիումը կարող է օգտակար լինել:

Անալոգայինից դեպի թվային համակարգ անցումը

Անցման գործընթացի կարևոր խնդիրներից մեկը հաճախականությունների կառավարումն է: Քանի որ թվային և անալոգային համակարգերում օգտագործվում է հաճախականությունների միևնույն սպեկտրը, ապա թվայնացման պլանում, օրենքում և կարգավորիչ մարմնի աշխատանքում անհրաժեշտ է նախատեսել, թե ինչպես է տեղի ունենալու անցումը: Նոր անալոգային լիցենզիաներ տրամադրելու մորատորիումը կարող է գործընթացի քայլերից մեկը լինել, սակայն այն չպետք է կիրառվի, եթե հեռարձակման դաշտը բազմազան և բազմակարծիք չէ: Այն երկրներում, որտեղ թվայնացման գործընթացը ամբողջությամբ կամ մասամբ ավարտվել է, թվային լիցենզիաներ տրամադրելու հարցում նախապատվությունը տրվել է գործող հեռարձակողներին: Այսինքն, կա վտանգ, որ թվայնացման առաջին փուլերում ավելի քիչ ընտրություն է լինելու: Հետևաբար, առաջին, և հատկապես անվճար, պլատֆորմներում ընդգրկված հեռարձակողները շատ կարևոր են լինելու: Հանրային հեռարձակողը պետք է իր տեղն ունենա այդ պլատֆորմում, սակայն թվային հեռարձակման համակարգում ընդգրկված մյուս ալիքները պետք է այնպես ընտրվեն, որ բազմակարծություն և բազմազանություն ապահովվի:

Կարգավորման սկզբունքներ

Կարգավորիչը պետք է հաշվի առնի լեզիտիմ ակնկալիքները և գրագետ վարչարարության սկզբունքները, այդ թվում՝ իրավական որոշակիության սկզբունքը: Արդեն իսկ տրամադրված լիցենզիաների պայմանների փոփոխությունը կամ լիցենզիաների չեղյալ հայտարարումը միշտ պետք է կատարվի օբյեկտիվորեն հիմնավորված եղանակով և համաչափորեն: Ներգրավված բոլոր կողմերին անհրաժեշտ է հարմարվելու համար ողջամիտ ժամանակ տրամադրել: Նրանք պետք է նաև այդ փոփոխությունների վերաբերյալ իրենց կարծիքները հայտնելու հնարավորություն ունենան: Թվայնացման գործընթացում, անցումից որոշ ժամանակ առաջ, կարգավորիչը պետք է թվայնացման պահանջն ընդգրկի լիցենզիաների մեջ, որպեսզի հեռարձակողները սկսեն պատրաստվել դրան: Սովորաբար դա արվում է անցումից 5 կամ ավելի տարի առաջ (օրինակ՝ Միացյալ Թագավորությունում, որտեղ նաև հատուկ ծրագիր էր մշակվել դեպի թվային համակարգ անցման հարցում օգնելու նպատակով):

Եզրակացություններ

Լրացումներ կատարելու մասին օրենքի հետ կապված հիմնական խնդիրը վերաբերվում է նրա ընդունման եղանակին՝ առանց խորհրդակցությունների: Դա լուրջ խնդիր է, քանի որ նոր գործընթաց ներմուծելու մեջ շատ կարևոր է ներգրավել տվյալ ոլորտի ներկայացուցիչներին: Ճիշտ է, որ ինչ-որ մի պահի մորատորիումի անհրաժեշտություն կարող է ծագել: Դա պայմանավորված է նրանով, որ թվային և անալոգային համակարգերում նույն հաճախականություններն են օգտագործվում, և անցման պահին բոլոր հեռարձակողները պետք է պատրաստ լինեն: Ձուգահեռաբար երկու համակարգեր պահպահելը շատ թանկ է: Գործող ընկերությունները սովորաբար պետք է թվային համակարգին անցնելու հնարավորություն ունենան: Քանի որ որոշ ժամանակ նոր լիցենզիաներ չեն տրվելու, ապա շատ կարևոր է, որ թվային համակարգ ներմուծելու պահին գոյություն ունենա բազմակարծիք համակարգ:

Եվրախորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարական Rec(2003)9-ում, որը վերաբերվում է թվային հեռարձակման համակարգի ժողովրդավարական և սոցիալական դերի խթանման հարցերին, սահմանված են մի շարք սկզբունքներ, որ անդամ-պետությունները պետք է հաշվի առնեն թվային հեռարձակման համակարգ ստեղծելիս: Այնտեղ հաստուկ շեշտվում է բազմակարծությունը: Հանձնարարականը կողմ է արտահայտվում արագ անցմանը դեպի թվային հեռարձակման համակարգ, սակայն նշում է, որ դա պետք է արվի՝ հաշվի առնելով հանրության և բոլոր տեսակի հեռարձակողների շահերը: Դրա համար անհրաժեշտ է ապահովել համապատասխան իրավական դաշտ, ինչպես նաև բարենպաստ տեխնիկական և տնտեսական պայմաններ:

Նույնիսկ եթե մորատորիումն անխուսափելի է, այն չպետք է կիրառվի բազմազանության աստիճանը նվազեցնելու հաշվին: Եվրախորհրդի հանձնարարականի մեջ հաստուկ նշվում է լիցենզավորման գործընթացը և այն, որ առաջարկվող ծառայությունները պետք է բազմազան լինեն: